

ՀԱՇՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Անցնող Մայիսի սկիզբը, Ազգի Ընդհանրական Հայրապետ Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս բաղծանք յայտնած էր այցելելու Ս. Երկիր, թէ յուխտ եւ յերկրագութիւն Տնօրինական Արքավայրերու եւ թէ մօտէն հնատաքրքրուելու համար Ո. Յարութեան Տաճարի նորոգութեան ընթացիկ աշխատանքներով, որոնց ծախքերէն մեղի բաժին ինկածը հոգալու համար կազմուած Համազգային Յանձնախումբին նախագահութիւնը ստանձնած է: Եւ իրեւ այցելութեան թուական կը յիշուէր Յոնիսի առաջին շաբաթը: Կարգ մը պարագաներ սակայն հարկադրեցին Վեհափառը քանի մը ամիսով յետածգել իր այս պատմական այցելութիւնը: Եւ երբ վերջապէս Սեպտեմբերի վերջերը որոշուեցաւ Վեհին Յորդանան ժամանումի թուականը (12 Հոկտ.), Սաղիմահայութիւնը, իր բոլոր խաւերով ու հոսանքներով, ամիսներու անձկագին սպասումէն ետք սկսաւ ապրիլ անպատում բերկրանքի օրեր Վերջապէս ինքն ալ բախտը պիտի ունենար վայելելու Վեհին օրհնարեր ներկայութիւնը, ինչպէս ասկէ առաջ ունեցան արտասահմանի հայահոծ գաղութներէն շատեր: Այսեղ կ'արձէ յիշել թէ 1651ին, Պիտիպոս Աղքակիցի Կաթողիկոսի տուած այցելութենէն ի վեր առաջին անդամն էր որ Ամենայն Հայոց Կաթողիկոս մը կ'այցելէր Սուրբ Երկիր: Վ. Ա. Հայրապետը 1956ին, իր արտասահման կատարած առաջին ուղեւորութեան ընթացքին, թէիւ մտալիր էր այցի գալու Երուսաղէմ, սակայն Միջին Արևելքի քաղաքական անկայուն վիճակը արգելք հանդիսացած էր Վեհափառի այդ գեղեցիկ բաղծանքի իրագործումին:

Վեհափառի ժամանումը կանխող եօթնեակի ընթացքին, անօրինակ եռուգեռ մը ծայր տուաւ Վանքի աւագ դրան մօտ եւ հնադարեան կամարներուն ներքեւ: Ներկ, մաքրութիւն, ծեփերու եւ շնուածական այլ մանր-մունք նորոգութիւններ Պատրիարքարանէն ներս, անոր մուտքին, սանդուցներու երկայնքին եւ եկեղեցւոյ գաւիթը: Ապա ծեռնարկուեցաւ Մայր Տաճարի զարդարման, բիբրեղեայ ջաներով, գոյնզգոյն ու փալփրուն հարիւրաւոր արծաթեայ կանթեղներով, խաչերով, մոմերով ու ծաղկներով: Աւագ Խորանին երկու կողմերը կառուցուեցան արուեստական գեղատիպ խորաններ: Մայր Տաճարը այսպէս պերճափայլ հանդերձանքով պատրաստ եղաւ արժանաւորապէս ընդունելու Հայոց Եկեղեցւոյ արժանընտիր ու առաքելատիպ իշխանաւորը: Իսկ Վանքի դռնէն դուրս, Պատրիարքարանի եւ հանդիպակաց կամարներու մուտքերուն կանգնուեցան յաղթական կամարներ, արաբական դրօշի գոյները (կարմիր, սև, ներմակ եւ կանաչ) կրող կերպաններով զարդարուն ու «բարի գալուստ շատ սիրելի Վեհափառին» վերտառութեամբ: Կամարներուն վրայ զետեղուեցան Ն. Վ. Ա. Ս. Տ. Վազգէն Կաթողիկոսին մնադիմիր նկարները. Դրուեցան նաեւ ելեքտրական լոյսերու բազմաթիւ շարաններ, որոնք ամէն զիշեր վանքի դրան հրապարակը կը վերածէին երփներանգ, փալփրուն ու ակնախտիլ լոյսերու ծովի մը: Իսկ արմաւենիի ոստեր ծածկեցին գորշ մերկութիւնը Վանքի արտարին պատերուն: Այս բոլոր զարդարանքները մնացին մինչեւ Վեհին մակնումբ: Իսկ Խորէն Վեհափառի ժամանման նախօրեակին՝ կամարներուն վրայի նկարները փոխանակուեցան Վ. Ա. Թագաւորը (մէջտեղ) եւ զոյգ Վեհափառները (երկու կողմերուն) ներկայացնող ոսկեայ շրջանակով նկարներու:

* * *

Ն. Ա. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Վեհափառ Կաթողիկոս Ամենայն Հայոց, իր շքախումբով, որ կը բաղկանար Գերշ. Տ. Հայկագուն Արքեպաս. Արքահամեանէ, Հոգշ. Տ. Սրբաւմբով, որ կը բաղկանար Գերշ. Տ. Հայկագուն Արքեպաս. Արքահամեանէ, Հոգշ. Տ. Սրբաւմբով, ու Վեհափառներանէ եւ հարտարապետ Միքայէլ Մազմանեանէ, Յորդանանի մայրասէն Վարդ. Պէրպէրեանէ եւ հարտարապետ Միքայէլ Մազմանեանէ, Յորդանանի մայրա-

բաղար Ամման հասաւ Շր. 12 Հոկտ.ի զիշերուան ժամը 11.20ին։ Վեհ. Հայրապետը կու գար Լոնսունէն, ուր ճիւրը եղած էր Անկիլիքան եկեղեցոյ պետ Բամուլը Արքապսին։ Նոյն օդանաւոյ Վեհափառին հետն էին նաև Գերշ. Տ. Այսն Արքապս. Անուկեան, և ուղ-նորդ Հայոց Հիւս. Ամերիկայի. Գերշ. Տ. Թորում եղաւ. Մանուկեան, Առաջնորդ Հայոց Գաղիմարնիոյ և Պր. Ճան Քիւրքման, Գաղիմարնիոյ Քեմական ժողովի Կտինապետը։

Օդակայտանին մէջ Վեհափառ Հայրապետը և իր նետուորդները ընդունուեցան Պետութեան ներկայացուցիչներուն կողմէ. զլխաւորութեանը Ամմանի Քաղաքապետին, շրջապատուած բաղարի փոխ-հրամանատարէն, ոստիկանապետէն և բարպին ու ներ-քին Կործոց Նախարարութեան ներկայացուցիչներէն։

Օդանաւէն իջած պահուն Ամեն. Տ. եղիշէ Արքապս., Պատրիարք Հայոց Երուսա-ղէմի, շրջապատուած Միարանութեան անդամներէն և պետութեան ներկայացուցիչ-ներէն, եղայրական ողջագուրումով ընդունեց Վեհափառ ճիւրը և ներկայացուց-աւանդական հացն ու աղր, խնդրելով որ օրնէ զանոնք։ Նոյնին Ս. Օծութիւնը օրնեւց հացն ու աղր, ձեռնուեցաւ պետական անձնաւորութիւններու հետ և ժողովուրդի



Պետական ներկայացուցիչները Վեհ. ճիւրին նետ., Ել-Օրսու պանդոկին մէջ։

Խուռն բազմութեան ծափերուն մէջ ուղղուեցաւ օդակայտանի ընդունելութեան սրահը։ Ակա ժողովրդային մեծ ոգեւորութեան և խանդավառութեան մէջ, Ն. Ս. Օծութիւնը թողուց օդակայտանը և Թագաւորին կողմէ տրամադրուած յատուկ ինքնաշարժով ուղղուեցաւ Ել-Օրսու պանդոկը։ Հոն., Ամմանի Վահմափայր Կառավարիքը բարի զա-լուսի խօսքը ուղղեց Ն. Ս. Օծութեան և մազթանքներ բրաւ անոր շնորհարեր այցե-լութեան համար։ Ն. Վահմութիւնը աւելցուց. «Օրնուած այս երկրին մէջ, մենք կ'ու-զենք որ ամէն մարդ ապրի խաղաղ և ազատ, առանց խարութեան ազգի և կրօնի. միակ տարրերութիւնը որ կայ բրիտանիային և իսլամին մրգեւ այն է, որ մին եկեղեցի կ'երթայ աղօթելու, իսկ միւսը մզկիթ»։

Վեհափառ Կաթողիկոսը գիշերեց Ել-Օրտոն պանդոկին մէջ : Յաջորդ օր , Կիրակի կէսօրէ առաջ , Ամեն . Պատրիարք Հօր եւ Սրբազն Հայրերու ընկերակցութիւնը , այցելեց թագաւորական պալատ եւ ստորագրեց պատուոյ տումարին մէջ :

Կէսօրուան ժամը 1.30ին մնձ շրերթով , մասնակցութեամբ Ամմանի ժողովուրդին եւ օտար հիւրերուն , Վեհափառ Հայրապետը եւ Ամեն . Սրբազն Պատրիարքը , թագաւորական ինքնաշարժով , մոթոռսիկէ զներով եւ օստիկանական ու զինուորական պատիւներով եւ յիսունէ աւելի ինքնաշարժերու շրախումբով , Ամմանէն մեկնեցաւ Ա . Երուսաղէմ : Ժամը կէսին , Յորդանանի կամուրջին վրայ , Վեհափառ Հայրապետը ողջունեցաւ Երուսաղէմի Մութասարրքին եւ Ռոտիկանապետին կողմէ , ինչպէս նաև Երուսաղէմէն յիսունէ աւելի ինքնաշարժերով եկած խանդավառ հայ նիրկայացու ցիշներէ :



Երուսաղէմի Յունաց Աննի . Պատրիարքը , Վահօմ Կառավարիչը եւ
Բանակի Հռամանատարը Վեհափառին ըստը :

Բարի գալուստի պաշտօնական խօսքին վերջ , ինքնաշարժներու թափօրը սկսաւ յառաջանալ դէպի Երուսաղէմ : Ժամը 3ին , Հայոց Վանքին կից Դաւթի գրան դիմաց , Վեհափառ Հայրապետը իջաւ ինքնաշարժէն , զգեստաւորուեցաւ եւ զլուխը անցաւ մեծահանդէս թափօրին , կազմուած զգեստաւորուած Արքապիսկոպոսներէ , Եպիսկոպոսներէ , Վարդապետներէ եւ Ընծայարանի ու Ժառանգաւորաց սաներէ : Որ զխորհուրդը քալուտեանո շարականի երգեցողութեամբ , պատկառելի թափօրը շարժեցաւ դէպի վանքի աւագ զուուը , բազմահազար ժողովուրդի երջանիկ եւ հրճուազին խանդէպի վանքի աւագ զուուը , բազմահազար ժողովուրդի երջանիկ եւ հրճուազին արիները պատուի կեցած էին դագառութեան մէջէն : Քաղաքին երեք Միութիւններու արիները պատուի կեցած էին նամբուն երկու կողմերը : Վեհափառը ամպհովանիի տակ եւ գորգապատ նամբաներէն անցնելով հասաւ մինչեւ աւագ զուուը , որ իրն բարի գալուստի եկած էին բրիստոնեայ բոլոր յարանու անութեանց ներկայացու ցիշները : Մովածաւալ բազմութիւնը իր ուրախութուր յարանու անութեանց ներկայացու ցիշները :

թիւնը արտայայտեց աղաւնիներ թռցնելով՝ Վեհափառք ողջունեց պատուոյ պահակախումը և մորթուած ոչխարներու արեան վրայէն մուտք գործեց Ս. Յակոբայ գաւիթը:

Ս. Յակոբանց Մայր Տաճարը զգեցած էր տօնական օրերու յատուկ իր փառքն ու շրեղութիւնը եւ անգամ մը եւս կը պայմանանայ երբ Վեհափառ Կաթողիկոսը կը մօտենար Գլխադրի Ս. Անդանին, կատարելու իր ուխտը:

«Հրաշափառ»ի երգեցողութեամբ թափօրք ուղղուեցաւ դէպի աւագ խորան: Ապա Ամեն. Պատրիարք Սրբազնը բարի գալուստի խօսքը արտասանեց: Վեհափառ Հայրապետը յայտնեց իր սրտազին ուրախութիւնը երուազէմ գտնուելուն համար, եւ շնորհակալութիւնը բոլորին: Օրինեց Հաշիմական Տունը եւ աղօթեց Նորին Վեհափառութիւն Հիւսէյն թագաւորի արեւշատութեան եւ յաջողութեան համար:

Փողովուրդի խուռներամ բազմութեան մէջէն, Ն. Ս. Օծութիւնը բարձրացաւ Պատրիարքարան, ուր Միաբան Հայրերը, աշակերտութիւնը եւ բազմահազար ժողովուրդ կարգով եկան համբուրելու իր Ս. Աջը եւ բարի գալուստ մաղթեցին Սրբազն մեծ հիւրին:



Պատրիան բարձրացած նիւրեր Վեհափառին ընկը:

Յաջորդ օր, Երկուշարթի, Հոկտեմբեր 14ին, կէսօրէ առաջ ժամը 10էն 12, Վեհափառ Հայրապետը ընդունեց Ս. Քաղաքի կրօնապետները եւ Նորին Վասմութիւն Կառավարիչը, Աստիկանապետը եւ Բանակի Հրամանատարը:

Նոյն օր, կէսօրէ ետք ժամը 4էն 6, ընդունուեցան քաղաքիս Հիւսատոսները, պիտական պաշտօնատարները, դատաւորները, քաղաքի երեւելիները եւ հայ մեծամեծները:

Բոլորի բարի գալուստի խօսքերուն մէջ կ'արտայայտուէր ուրախութիւնը, որով յեցուած էր Ս. Քաղաքը, մեծ կրօնապետի պատմական այցելութեամբ:

Երեքշարթի օր, Հոկտ. 15ին, բաղարս ժամանեցին Հ. Բ. Ը., Միութեան Նախագահ Պր. Ալեքս Մանուկեան և Տիկինը, Տէր և Տիկին Օննիկ Թապիսեան, Տիկին Մարդու հի Յովսէ փեան, Պր. Պատիկեան և այլ հիւրեր: Տիար Մանուկեան եւ իր Տիկինը վանրի աւագ դրան դիմաւորուեցան Ս. Թարգմանչաց վարժարանի աշակերտներու ժամանարութիւններով: Երկու ուսանողուհիներ զեղեցիկ ծաղկեփունջեր նուիրեցին մեծ պատի հիւրերուն:



Վեհափառ Հայրապետը եւ Հ. Բ. Ը. Միութեան Նախագահ՝ Տիար Ալեքս Մանուկեան

Կէսօրին Պատրիարքարանի մէջ տեղի ունեցաւ միծ ճաշկերոյթ մը ի պատի հիւրերուն, Ն. Ա. Օծութեան Նախագահութեամբ: Ներկայ էին. —

ԳԵՐԾ. Տ. ԱՒՈՆ	ԱՐՔԵՊՈ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
» Տ. ՀԱՅԿՈԶՈՒՆ	» ԱԲՐԱՀԱՄԻԵԱՆ
» Տ. ԱԵՐՈՎԵԼ	» ՄԱՆՈՒԿԵԱՆ
» Տ. ԴԵՐԵՆԻԿ	ԵՊՈ. ՓՈԼԱՏԵԱՆ
» Տ. ԲԱԲԻ-ԷՆ	» ԱՊԱՏԵԱՆ
» Տ. ԹՈՐՊՈՄ	» ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՀՈԳԾ. Տ. ՇԱՀԵ	ՎՐԴ. ԱԼԵՄԵԱՆ
» Տ. ՎԱԶԵ	ՑՈՎՈՒՓԵԱՆ
» Տ. ԱՐՈՒՆ	ՊԵՐՊԵՐԵԱՆ
ՏԻԱՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ	
» » ԶՈՐ. ԱԱՐԴԻՒ ԶԱՐԴԱՐԵԱՆ	
ՏԻԿԻՆ ՄԱՐՔՐՈՒՏԻ ՑՈՎՈՒՓԵԱՆ	
» ՄԱՆՈՒԿԵԱՆ	
ՏԻԱՐ ԵՐՈՒՆԻԴ ՀԻՒՈՒՍԵԱՆ	
» ՍՏԵՓԱՆ ՄՐԱՊԵԱՆ	
» ՄԻՔԱՅԻԼ ՄԱԶՄԱՆԵԱՆ	
» ԵՐՈՒԱՐԻ ԻՒԹԻՒՃԵԱՆ	
» ՕՆՆԻԿ ՊԶՏԻԿԵԱՆ	

ճաշկերոյթի ընթացքին, Ամեն. Ա. Պատրիարք Հայրը առաջարկեց առաջին բաժակը Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի կենաց և իսկ Ն. Ա. Օծութիւնը փոխազարձեց շնորհակալութեամբ եւ բաժակ առաջարկեց բոլոր ներկաներուն կենաց առանձնաբար :

Ճաշէն վերջ, կէսօրէ ետք ժամը 5ին, Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ գումարուեցաւ Ա. Արութեան Տաճարի նորոգութեան Համազային Յանձնախումբի առաջին նիստը, նախագահութեամբ Ն. Ա. Օ. Տ. Տ. Վազգէն Առաջին Սրբազնագոյն Կաթողիկոսի :

Ժողովի ատենազրութիւնը հրատարակուած է յաջորդ էջերուն մէջ :

Զրեբշարթի օր, Հոկտ. 16ին, Ամերիկայէն ժամանած հիւրերը այցելեցին Բեթղեհէմ, Ա. Մննդշնան այրը եւ Տաճարը. Գեթսեմանի, Աստուածամօր գերեզմանը եւ ապա, կէսօրէ ետք, մասնակցեցան յատուի թափօրի մը Ա. Յարութեան Տաճարէն ներս, ուր աղօթեցին Քրիստոսի Զարչարանաց եւ Յարութեան վայրերուն երկրազելէ ետք :

Հինգշարթի օր, Հոկտ. 17ին, Ն. Ա. Օծութիւնը կէսօրուան ճաշի հրաւիրուած էր Ֆրանչիսկեան Միարանութեան Վանքը : Սուրբ Տեղաց պահապան Միարանութեան բոլոր Հայրերը Ն. Ա. Օծութիւնը ընդունեցին իրենց Մայրավանքի մուտքին եւ առաջնորդեցին նախ մեծ սրահը եւ ապա ճաշարան : Միրոյ եւ ուրախութեան փոխազարձ արտայայտութիւններէ ետք, նորին Վեհափառութիւնը նուիրեց արծաթեայ ափսէ մը, բանդակազարդուած հայկական գարդերով եւ Ա. Էջմիածնի Տաճարի նկարով :

Ճաշէն ետք, Վեհափառ Հայրապետը այցելեց Ֆրանչիսկեան Մատենադարանը եւ ապա հրամեցաւ առաւ եւ վերադարձաւ Պատրիարքարան :

Նոյն օրը կէսօրէ ետք, եկեղեցականներու եւ ազգայիններու խումբ մը գացըն Ամման եւ այցելեցին նորակառոյց Խոզաշնան-Կիւրէնկեան Վարժարանը : Եարի գալուստի խօսք արտասանեց Հոգշ. Տ. Շահէ Վրդ., որուն պատասխանեց Պր. Ալեքս Մանուկեան, յայտնելով իր բարձր գնահատանքը եւ գոհունակութիւնը Պատրիարքարանի հովանաւորած կրթական հիմքին համար, որուն շօշափելի արդիւնքն է Ամմանի փառաւոր դպրոցը :

Երեկոյեան, Վեհափառ Հայրապետը. ընկերակցութեամբ Ամեն. Պատրիարք Սրբազնան Հօր եւ Արքազան Հայրերու, իջաւ Մեռեալ Մովու եզերը, ուր իրենց միացան Ամման այցելող հիւրերը եւ հոն տեղի ունեցաւ ճաշկերոյթ մը, ուրախ մթնոլորտի մէջ :

Ուրբաթ առաւօտ, ամսոյս 18ին, պատուական հիւրերը այցելեցին Ա. Յակոբ Տաճար Տաճարը : Տեսան մաս մը գանձատան թանկարգին առարկաներէն եւ ապա ընկերացան Վեհափառ Հայրապետին, Ամեն. Պատրիարք Հօր եւ Միարանութեան, երբ Ն. Ա. Օծութիւնը, ժամը 11ին կէսօրէ առաջ, փոխ այցելութեան զնաց Յունաց Պատրիարքարան եւ Ֆրանչիսկեան Միարանութեան : Վեհափառ Հայրապետին կողմէ խումբ մը Եպիսկոպոսներ այցելեցին նաև Լատիններու, Պատրիարքարանը, Սուրբներու, Ղպտիններու, Հապլիշներու, Անկիլիքաններու, Լուտերականներու եւ այլ կրօնապետներու, փոխազարձելու համար բարի գալուստի իրենց այցելութիւնը :

Շաբաթ օր, ամսոյս 19ին, կէսօրէ ետք ժամը 2.30ին, Վեհափառ Կաթողիկոսը «Հրաշափառով մուտք գործեց Ա. Յարութեան Տաճար :

Վանքի գուռէն թափօրը կազմուեցաւ մասնակցութեամբ Թարգմանչաց եւ Ժառանգաւորաց աշակերտներու, ուրարակիր զափիններու, Քահանայ Հայրերու, Վարդապետներու եւ Սրբազն Եպիսկոպոսներու, բոլորն ալ զգեստաւորուած : «Ար զխորհուրդ քո գալստեան» շարականի երգեցողութեամբ թափօրը շարժեցաւ վանքի գուռէն եւ դրօշկազարդուած շուկայէն ուղղուեցաւ դէպի Տաճար, տուներէն նետուած ծաղիկ-

ներու վրայէն եւ ճամբու երկայնքին կեցած խանութպաններու սրբած վարդի զուրի բուրումին ընդումէցն :

Վեհափառ Հայրապետը օրնից ուխտաւոր իւ բարեպաշտ ժողովուրդը , որ խռնուած էր մինչեւ Տաճարին մուտքը : Ա. Յարութեան Տաճարի դրան առջեւ Սարկաւագները մատուցին խունկը , մինչ Դպիրները սկսան երգել «Հրաշափառ» : Վեհափառ Հայրապետը խնկարկեց Պատանատեղւոյն շուրջ եւ թափօրով առաջնորդուեցաւ Ա. Գերեզման , ուր մտաւ , երկրպագեց եւ կատարեց իր ուխտը : Իրեն հետեւեցաւ Եկեղեցական դասը , որ համբուր' լէ ետք Ա. Գերեզմանը , խոնարհեցաւ Վեհափառին առջեւ , համբուրեց Զեռաց Խաչը կրկնելով «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» :

Այսուհետեւ Վեհափառ Հայրապետը առաջնորդուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին, ուր նախագահեց «Լոյս Զուարթ»ի արարութութեան :

Ժամերգութենէն ետք Վեհափառ Կաթողիկոսը ելաւ Տեսչարան, հանգչեցաւ եւ թափօրով վերադարձաւ Ա. Յակոբեանց վանքը. դարձեալ ճամբուն երկու կողմերը պատուի կեցած քաղաքիս երեք զիսաւոր հայկական Միութիւններու արիներու երկարածիգ շարքերուն ընդմէջէն :

Կիրակի, 20 Հոկտ.ի կ. ա. ժամը 8.30ին, նոյն թափօրով Ն. Ա. Օծութիւնը դարձեալ առաջնորդուեցաւ Ս. Յարութեան Տաճար, ուր Ս. Գերեզմանին վրայ մատոյց ուխտի Սուրբ Պատարազը և քարողից, բազմահազար հաւատացեալներու ներկայութեան: Ն. Ս. Օծութիւնը իր խօսքին սկիզբը յայտնեց թէ այս օրը անմոռանալի պիտի մնայ իր յիշողութեան մէջ, օր մը՝ լի սրբազան ապրումներով: Ապա շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ, որ հաճած էր իրականութեան վերածել տարիներու իր բազծանքը: Ենույ անդրադառնալով Տաճարէն ներս ընթացք առած նորոգութեան ծաւալուն աշխատանքներուն, կոչ ըրաւ Հայ ազգի բոլոր զաւակներուն որ իրենց կարելին ընեն գոյացնելու նորոգութենէն մնջի բաժին ինկած գումարը, այդպէսով համարքիստոնէ ական այս կարեւորագրյն Արքավայրի նորոգութեան մասնակցած ըլլալու փառքը աւելցնելով մեր անունին: Աւ իր խօսքի վերջաւորութեան յայտնեց իր երախտագիտական զգացումները Յորդանանեան Կառավարութեան և անոր զլուխը գտնուող Հիւսէյն Թագաւորին, որ վերին հակողն է այս Սուրբ Վայրերուն եւ որ այնքան հոգածութիւն ցոյց է տուած միշտ անոնց պահպանումին ու բարեգարդման համար: Պատարազի Վեհափառին կը սպասարկէին Հարաւային Ամերիկայի կաթոլ. Պատուիրակ Դերշ. Տ. Բարզէն Եպիսկ. Ապատեան և Գալիֆորնիոյ թեմի Առաջնորդ Դերշ. Տ. Թորգոմ Եպիսկ. Մանուկեան: Պէյրութէն Ժամանած Կոմիտասեան երգչախումբը, իր դաշն ու զրաւիչ երգեցողութեամբ, աւելցուց վայլը օրուան փառաշուր հանդիսութեան: Բազմահարիւր հաւատացեալներ մօտեցան Ս. Հաղորդութիւն առնելու Վեհափառին օրհնեալ Աջէն: Ա. Պատարազը եւ քարողը ծայնասփռուեցաւ երուսաղէմի ռատիոկայանէն: Ա. Պատարազէն կար, Նորին Սուրբ Օծութիւնը նախագահեց Ս. Գերեզմանին և Պատանատեղւոյն շուրջ կատարուած մեծահանդէս թափօրին, եւ կարճ հանդիսաէ մը ետք շրեթով վերադարձաւ Մայրավանք:

21 Հոկտեմբերին, Վեհ. Հայրապետը, ընկերակցութեամբ Ս. Աթոռոյս Ամեն. Պատրիարք Մբրազանին և Պատ. Միաբանութեան, այցելեց վանուցս կրթական և դրական հաստատութիւնները։ Ժառանգաւորաց Վարժարանի մուտքէն՝ ուսանողութիւնը «Էջմիածինի ի հօրէ» շարականի երգեցողութեամբ առաջնորդեց Վեհափառ հանդիսարան։ Հոն եղան բարի գալստեան արտայայտութիւններ Սարկաւագներու և Ժառանգաւոր սաներու կողմէ։ Վեհափառ Հայրապետը օրինեց վարժարանի ուսուցչական կազմն ու աշակերտութիւնը և տպաւորիչ խորատական մը խօսեցաւ Ժառնագ. սաներուն, շեշտելով հոգեւոր այս կրթարանին կատարած և կատարելիք յոյժ կենաական դերը մեր Եկեղեցւոյ և ժողովուրդի կեանքին մէջ։

Ապա Վեհափառը առաջնորդուեցաւ Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարան։ Տիսչութիւն, ուսուցչական կազմ եւ վարժարանի թիւով 325 երկսեռ աշակերտութիւնը ծափողոյններով ընդունեցին Վեհ. Հիւրը։ Դպրոցի սրահին մէջ Վեհափառը օրինեց աշակերտութիւնը ու մէկական փորքիկ ուկի խաչեր տուաւ բոլորին։

Վեհ. Հայրապետը այցելեց նաև Ս. Հրեշտակապետաց եկեղեցին, ուր իր ուխտը կատարեց Քրիստոսի Բանտի մատրան մէջ, Մայրապետանոցը, Կիւլպէնկիան Մատենադարանը, Տպարանը եւ Զեռագրատունը, ամէն տեղ իր գոհունակութիւնը յայտնելով կատարուած աշխատանքներուն համար։

22 Հոկտեմբեր, Երեքշարթի առաւօտ, Ե. Ս. Օծութիւնը իր շքախումբով մեկնեցաւ Բեթղեհէմ, յուխտ եւ յերկրագութիւն Երիստոսի Ծննդեան Արքագայրին։ Ժամը չին, ինքնաշարժերու պատկառելի թափօրը ճամբայ ելաւ Մայրավանքի գոնէն, առաջնորդութեամբ հնձելանաւորդ ոստիկաններու։ Ճամրու կէսին, Յունաց Ս. Եղիա վանքի մօտերը, Ե. Ս. Օծութիւնը դիմաւորուեցաւ Բեթղեհէմի եւ շրջակայ զիւղերու բաղարագետներէն եւ մուխթարներէն, ինչպէս նաև Բեթղեհէմարնակ երեւելի ազգայիններէ։ Օդը ցուրտ էր, աշնան խոնաւ քամի մը կար դուրսը, Ծննդեան առաւօտները յիշեցնող։ Ժամը 9.30ին թափօրը հասաւ Ս. Ծննդեան վանուց մեծ հրապարակը, ուր Վեհափառը ընդունուեցաւ զինուորական պատիւներով։ Բեթղեհէմի Կառավարին ու Աստիկանապետը եւ օտար յարանուանութեանց հոգևորական ներկայացուցիչները բարի գալուաս մաղթեցին մեծ հիւրին։ Միաբանութիւնն ու աշակերտութիւնը արդէն զգեստաւորեալ՝ «նորհուրդ մեծ» շարականի երգեցողութեամբ առաջնորդեցին Վեհափառ Հայրապետը Ս. Ծննդեան Տաճար, ժողովուրդի բազմութեան ընդմէջն եւ մորթուած ոչխարիներու արեան վրայէն։ Անսահման էր հրճուանքն ու խանդակառութիւնը ներկաներուն, ծնունդ՝ Վեհին օրհնաբեր ներկայութենէն զատ Ծննդեան շարականներուն առթած սրտագրաւալ ապրումներով։ Նորին Ս. Օծութիւնը Փրկչի Ծննդեան տեղուոյն վրայ երկրագագելէ իր ուխտը կատարելէ ետք, հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Այրին մէջ։ Պատարագին էր Գալիֆորնիոյ թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգում եպս. Մանուկեան։ Արարողութեանց աւարտին, Վեհափառ Հայրապետը, Ս. Պատրիարք Հայրը եւ Միաբանութեան անդամներն ու Ս. Սթոռոյ հիւրերը թէյասեղանի հրատիրուած էին Բեթղեհէմի Քաղաքապետութեան կողմէ։ Ն. Վամ. Քաղաքապետը բարի գալրատեան զերմ արտայայտութիւններով ողջունեց Վեհափառ Հայրապետը, որ փոխադարձ շնորհակալութիւններ արտայայտելէ ետք յայտնեց իր մեծ գոհունակութիւնը այս առիթով եւ բարգաւաճում մաղթեց Քրիստոսի Ծննդեան այս համեստ զիւղաբազրին։

Կէսօրէ ետք ժամը 2ին, նոյն հանդիսական զնացքով թափօրը վերադարձաւ Երուսաղէմ։

Հոկտեմբեր 23ին, Զորեքշարթի օր, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց այցելեց Նորին Վեհափառութիւն Հիւսէյն Ա. Թագաւորին Ամմանի մէջ։

Ե. Ս. Օծութիւնը ճամբայ ելաւ Երուսաղէմէն առաւօտեան ժամը 10ին, ընկերակցութեամբ Ամենապատի Տ. Եղիշէ Պատրիարք Հօր, Գերշ. Տ. Տ. Հայրիկ, Միոն, Սուրէն, Հայկազուն եւ Արքովրէ Արքեպիսկոպոսներու, Գերշ. Տ. Տ. Գերենիկ, Բարգէն եւ Թորգում Խափիկոպոսներու, Հոգշ. Տ. Տ. Յակոբ, Կիւրեղ եւ Արտէն Վարդապետներու եւ արտասահմանի ու Յորդանանի ազգայիններու մեծ շքախումբի մը։

Վեհափառ Հայրապետը եւ իր շքախումբը ներկայացան Հաշիմական Պալատ Ժամը 12.30ին եւ ընդունուեցան Վեհափառ Թագաւորէն, որ այս առթիւ զգեցած էր իր զինուորական մեծապաշտօն հագուստը։

Ն. Ա. Օծութիւնը խօսք առաւ եւ յայտնեց իր ուրախութիւնը գտնուելու Ս. Երկրին մէջ, երկրագելու նույիրական ուխտափայրերուն եւ վայելելու հիւրասիրութիւնը Յորդանանի ժողովուրդին: Ենորհակալութիւն յայտնեց Վեհափառ Թագաւորին, որ բացառիկ պատիւներու արձանացուցած էր զինք, ապա ըստ երիտասարդ եւ բազակորով Արքային. «Մենք ուրախ ենք Ձեր մէջ տեսնելու Հաշիմական օրհնեալ գերդատանի շառաւախղը, այն գերդաստանին, որուն երջանկայիշատակ Թագաւորներէն Ապտալլան, հայր եւ պաշտպան կանգնեցաւ տառապեալ հայութեան, երբ ապաստան փնտուցին իր իշխանութեան տակ:

«Հայերս ամենուրեք, երախտազիտութեամբ պիտի յիշենք մեր ցաւի օրերը եւ ԶԵՐ
Հայրերու ու ԶԵՐ սիրոյ մեծողիութիւնը»:



Ն. Գ. Բ. Թագավորը Ցուցանանեան Ա. Կուրքի Ժամանակ կը պատուի
Ն. Ս. Օծուրինը:

Վեհափառ Հայրապետը ներկայացուց Վեհափառ Թագավորին թանկագին նուէրներ ,
որոնցմէ մին նորածին Ֆէյսալ իշխանին , որ ծնած էր Նորին Սրբութեան Ամման
ժամանումի նախօրեակին : Հայրապետը արեւշատութիւն եւ բախտաւոր օրեր մաղթեց
նորածին իշխանին եւ ըստ . «Ես Ամման մտայ ուրախութեան եւ հրճուանքի օր մը ,
ամբողջ ժողովուրդը ցնծութեան մէջ էր : Տայ Աստուած որ այդպէս անցնին Ֆէյ-
սալ իշխանին բոլոր օրերը» :

«Մենք ուրախ ենք իմանալով որ հաճելի եղած են Ձեր այստեղ անցուցած օրերը. Ս. Տեղերը, որոնց պաշտպանութիւնը Աստուած յանձնած է մեզի, բաց են բոլոր Աստուածոյ անունը դաւանողներուն առջեւ եւ մենք պատուուած կը զգանք երբ Ձերդ Արքութեան նման Բարձրապատիւ եւ պատկառելի անձեր այցի կուգան Արքավայրերուն»:

Վեհափառ Թագաւորը այս առթիւ և. Ս. Օծութեան կուրծքը զարդարեց Առաջին կարգի Արժանաց շքանշանով եւ յանձնեց թագաւորական գնահատանքի գիրը:

Բոլոր ներկաներու ծափերուն մէջ, Նորին Ս. Օծութիւնը բացագանձեց «Կեցչ չիսէյն Թագաւորը» եւ սիրալիք խօսքերու կարճ փոխանակումէ ետք, ներկաները հրաժշտ առին Վեհափառ Թագաւորէն:

Նորին Վեհափառութիւնը հաճեցաւ գուրս գալ պալատէն եւ Նորին Ս. Օծութեան հետ կենալ սանդուխներու առջեւ, շքախումբին հետ նկարուելու համար, եւ դարձեալ հրաժշտ առնելու ծափողոյններու խանդավառութեանը մէջ:



Վեհափառ Հայրապետը եւ Ն. Գ. Թագաւորը եւ Ամեն. Ս. Պատրիարքը պատւոյ օքանակի յանձնումները:


Նոյն կէսօրին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հաշկերոյթ տուաւ շքախումբի բոլոր անդամներուն, Էլ-Օրտոն պանդոկին մէջ:

Իսկ զիշերը, Ժամը ծին, Ամմանի Ֆիլատելիքիա պանդոկին մէջ, Ամմանի Ազգային Մարզական Միութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ մեծ հաշկերոյթ մը, ի պատիւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որուն մասնակցեցան հիւրերը եւ Ամմանի ընտրանի հայութիւնը:

Ն. Վեհափառութիւնը այցելեց նաև Ս. քաղաքի այլ կարեւոր սրբավայրերը: 25 Հոկտ. Ռուբաթ երեկոյեան. Ս. Պատրիարք Հօր եւ Միարան Հայրերու ընկերակցութեամբ, շրջեցաւ Ս. Յարութեան Տաճարի բոլոր մասերը, մեծապէս հետարրբուելով ծեռնարկուած մեծածախ և մեծածաւալ նորոգութեան գործերով: Ընդունուեցաւ Տաճարի Լա-

տինաց եւ Յունաց Տեսուններէն։ Ուրիշ օր մը այցելեց Հարամ-Շէրիֆ (Սողոմոնի Տաճար)։ Մզկիթի Շէյխը, սիրալիիր ողջունումէ մը ետք, պատցուց Վեհ։ Հայրապետը պատմական այդ վայրի բոլոր մասերը։ Վեհափառը այցելեց Նաեւ, Սրբազններու եւ Հոգեշնորհ Հայրերու ընկերակցութեամբ, Համբարձման Սրբափայրն ու Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ գերեզմանի Եկեղեցին, անոնց մէջ կատարելով իր ուխտը։

Շարաթ, Նոյեմբերի 2ը, մեկնումի օրն էր Վեհափառ Հայրապետին։ Կէսօրին, հակառակ ցուրտ օդին եւ պարբերաբար տեղացող անձրեւին, բազմութիւնը սկսած էր խոնուիլ վանքի աւագ դրան դիմացի հրապարակին վրայ։ Ապա անոնց կողքին տեղ գրաւել եկաւ երկարաձիգ շարանը Ս. Թարգմանչաց վարժարանի աշակերտութեան։ Եւ երբ ժամը 1ին Վեհափառը երեւցաւ վանքի աւագ մուտքին, ժողովուրդը սկսաւ որոտընդուստ ծափահարութեան։ Վեհափառը իր վերջին օրնութիւնը տալէ ետք մտաւ ինքնաշարժը, ընկերակցութեամբ Ա. Պատրիարք Հօր։ Սրբազններ ու Միարան Հայրեր



Նորին Վեհափառութիւն Հիւսեն Թագաւոր, Դ. Ա. Օծուրիւն Տ. Տ. Վազգեն Կարողիկոս, Ամեն. Տ. Եղիշէ Մեքան Պատրիարք եւ պալատ ներկայացող պատուիրակութիւնը՝ Պատմանի պալատին առջև։

տեղաւորուեցան ինքնաշարժերու մէջ ու թափօրը շարժեցաւ դէպի Կալանտիայի օդակայան, աշակերտութեան «Երթար քարոզ», Վեհափառ» սրտազեղ արտայայտութիւններուն ընդմէջն։ Ժողովուրդը ցրուեցաւ վանքի դռնէն, բաժանումին առթած տրտում տափաւորութեան ներքեւ, ճամբելէ ետք իրեն շատ սիրելի Հովուապետը, 20 օրեր անոր ներկայութիւնը վայելելէ ետք։ իսկ ազգայիններէն ոմանք ընկերացան Վեհի թափօրին մինչև օդակայան։ Ժամը 1.30ին, Վեհ։ Հայրապետը իր հետեւորդներով (Հայկազուն Արքապատ, Գաւազանակիր Արսէն Վարդ, եւ Ճարտարապետ Միքայէլ Մազմաննեան) բարձրացաւ օդանաւու։ Յուզիչ էր պահը երբ Վեհափառը օդանաւի սանդուխին գլուխը ետք առնալով։ իր հուսկ օրնութիւնը կուտար իրեն ողջերթ մաղթաղ ներկաներուն։ Երկու ժամներ ետք օդանաւը կը հասցնէր Նորին Սուրբ Օծուրիւնը եզիպոսի մայրաքաղաք։ Ժամեր ետք օդանաւը կը հասցնէր